ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Էլ. Փոստ vayktown@mail.ru

28 ՀՈՒԼԻՍԻ 2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 148-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի N 114-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Վայք համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 26-ի թիվ 57-Ա որոշումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

Վայք համայնքի ղեկավարի 2022թվականի հունիսի 24-ի « Վայքի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմը հաստատելու, այդ հանձնաժողովների աշխատակարգերը հաստատելու և Վայք համայնքի ղեկավարի 22.07.2015 թվականի թիվ 34-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 114-Ա որոշման 1-ին կետում ավելացնել Սուսաննա Կոստանյանին և Շուշանիկ Ասլանյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Էլ. Փոստ vayktown@mail.ru

05 ՕԳՈՍՏՈՍԻ 2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 149

ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի N1066-Ն որոշմամաբ հաստատված կարգի 7-րդ կետով սահմանված պահանջներով և հիմք ընդունելով քաղաքացի Նարեկ Ժիրայրի Նահապետյանի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի Արտավան բնակավայրի վարչական տարածքում գտնվող՝ քաղաքացի Նարեկ Ժիրայրի Նահապետյանին սեփականության իրավունքով պատկանող 0.99 հա (կադաստրային ծածկագիր՝ 10-011-0102-0015) գյուղատնտեսական հողեր նպատակային նշանակության խոտհարք հողատեսքը փոխել և դարձնել գյուղատնտեսական հողեր նպատակային նշանակության ավելի բարձրարժեք այգի /կորիզավոր/ հողատեսքի՝ առանց հողագնահատման խմբի փոփոխության:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և ենթակա է պետական գրանցման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

12 ՕԳՈՍՏՈՍԻ 2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 150

ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՎԱՐԴ ԱՂՎԱՆԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ N 50 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԿԻՍԱՆԿՈՒՂԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԸ (ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ) ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով,<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006թ մայիսի 18-ի թիվ 912-ն որոշման դրույթներով և 18,05,2006թ-ի թիվ 731-ն որոշմամբ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի Վայք բնակավայրի Շահումյան փողոց 1-ին նրբանցք 50 հասցեում գտնվող քաղ. Վարդ Աղվանի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող /վկայական 10-003-0024-0117/ հողամասում ինքնակամ կառուցված 21,4քմ մակերեսով ավտոտնակի կիսանկուղային հատվածը և կից հողամասը համարել օրինական:
2. Ընդունել ի գիտություն,որ կառույցներ պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում այլ քաղաքացիների կյանքին ու առողջությանը: Ինքնակամ կառույցը քանդման ենթակա չէ, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպերտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գետում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Սույն որոշման 1-ին կետում նշված շինությունների համար սահմանված 30430/ 21,4Х1422/ դրամ և հողամասի համար սահմանված 67572/ 1877Х0,0036/ դրամ գումարը ենթակա է վճարման՝ սույն որոշումը ուժի մեջ մտնելուց հետո 60 օրվա ընթացքում: Նշված գումարը չվճարելու դեպքում որոշումը կհամարվի ուժը կորցրած:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

12 ՕԳՈՍՏՈՍԻ 2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 151-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ՉԱՐԵՆՑԻ 3/7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՉՈՐԱՑԱԾ ԾԱՌԸ ԿՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Թույլատրել կտրել Վայք համայնքի Վայք քաղաքի Չարենցի 3/7 հասցեում մայթեզրին գտնվող չորացած բարդին, որը քամուց շարժվում է, և ընկնելու վտանգ կա:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ